

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ  
ԱՐԺԵՔԱՅԻՆ ԲԱԶՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀՈՎԱՅԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Ազգային անվտանգության ապահովման գործընթացը ենթադրում է հանրային և քաղաքական ինստիտուտների շրջանակներում ծավալվող իշխանական հարաբերությունների լեգիտիմ գործունեության արժեքային բազմաչափություն: Այս ենթատեքստում ժամանակակից քաղաքական գիտության շրջանակներում գերակա նշանակություն ունեն քաղաքական իշխանության լեգիտիմացման վերաբերյալ կիրառվող մոտեցումները:

Լեգիտիմության տեսության հիմնադիր Մ. Վեբերից հետո Դ. Իսթոնը իր քաղաքական համակարգի զարգացման հայեցակարգի շրջանակներում կարևորեց սեփական քաղաքացիների աջակցությունը քաղաքական իշխանության բարձրագույն ձևի՝ պետական իշխանության լեգիտիմության ապահովման գործընթացում: Իր մոտեցումը Դ. Իսթոնը հիմնավորեց առանձնացնելով լեգիտիմության երեք չափում՝ **գաղափարական, կառուցվածքային և անհատական**: Եթե գաղափարական լեգիտիմությունը կառավարման համակարգում գործող **«հիմնական արժեքների և նորմերի»** նկատմամբ քաղաքացիների աջակցությունն է, ապա կառուցվածքայինը՝ իշխանական ինստիտուտների միջև բաժանված **«իշխանության դերերի»** նկատմամբ քաղաքացիների վստահությունն է: Փաստորեն, անհատական լեգիտիմությունը արդյունք է կոնկրետ քաղաքական գործիչների և նրանց քաղաքականության նկատմամբ քաղաքացիների դրսևորած աջակցության: Քաղաքական կյանքը՝ որպես գործընթացների բարդ համալիր, որի օգնությամբ որոշվում են ինչպես **«մուտքի» (inputs)**, այնպես էլ իշխանական գործողություններով և որոշումներով պայմանավորված **«ելքի» (outputs)** արդյունքները, ենթարկվում է որոշակի **փոխկապակցված միջավայրի (environment)** վարքաբանական մեկնաբանությունների: Վերջինս ուսումնասիրելու համար Դ. Իսթոնը նկատի է ունեցել հետևյալը.

1. Հասարակությունում քաղաքական փոխազդեցությունները որոշակի վարքաբանական համակարգի գործառնման արդյունք են: Առաջին հայացքից այս եզրակացությունը պարզունակ է և հիասթափեցնող: Սակայն համակարգային վերլուծությունն ունի խիստ կանոնակարգված տրամաբանություն՝ ներքին հետազոծով և բազմաթիվ ելման կետերով, որոնցից յուրաքանչյուրի վերլուծությունը տարբեր արդյունքներ է տալիս:
2. Քաղաքական կյանքի՝ որպես համակարգի դիտարկումը հնարավոր չէ իրականացնել դատարկության մեջ: Քննելով այն ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական և հոգեբանական **շրջա-**

**պատի (environments)** տիրույթներում՝ փորձնականորեն անհրաժեշտ է ընդունել նրանցից յուրաքանչյուրի մասին մեր ունեցած տեսական գիտելիքների առանցքայնությունը: Եթե փորձենք անտեսել նման մոտեցումը, ապա հնարավոր չի լինի բացահայտել քաղաքական համակարգի կենսունակությունը հարափոփոխ աշխարհում:

3. Շրջակա միջավայրը իր բազմազանությամբ կարիք ունի ճշգրտման, քանի որ քաղաքական կյանքը բաց համակարգ է: Իր բնույթով այն որոշակիորեն առանձնանում է սոցիալական այլ համակարգերից՝ ներառելով այնպիսի իրադարձություններ և գործողություններ, որոնց շրջանակներում գործառվում է քաղաքական համակարգը: Եվ վերջապես, որպեսզի քաղաքական համակարգը դիմակայի շրջակա միջավայրից ստացած ազդակներին, պետք է ընդունակ լինի արձագանքելու իրեն հուզող հակազդեցություններին՝ հարմարվելով փոփոխվող իրականությանը<sup>1</sup>:

Դ. Իսթոնը, այս բաժանումը ելակետ ընդունելով, Մ. Վեբերի լեգիտիմության տիպերը դիտարկում է լեգիտիմության երեք չափումներով՝ ցանկացած քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի՝ **պետության գործառնան, ադապտացման և արդիականացման** որոշակի գաղափարական արժեքների տիրույթներում: Դրանք կրողները ձևական և ոչ ձևական ինստիտուտներն են, ինչպես նաև կոնկրետ անձինք, որոնք հավաքագրվել են կամ ջանում են հավաքագրվել իշխանական հարաբերություններում: Յետևաբար, Դ. Իսթոնի առաջարկած լեգիտիմության այս մոդելը հնարավորություն է տալիս հարաբերական անկախության և քաղաքական իրատեսության բազմաչափության մեջ լրացնելու Մ. Վեբերի հիմնադրած լեգիտիմության տեսությունը: Այդ իմաստով ուշագրավ է քաղաքագետ Մ. Մարգարյանի այն հարցադրումը, որ «.. լեգիտիմությունը քաղաքական զարգացման համար անհրաժեշտ որոշակիացված մակարդակ է, որտեղ քաղաքական համակարգի անդամներն այն ընդունում են որպես իրենց աջակցությանն արժանի փաստ»<sup>2</sup>:

Նմանօրինակ մոտեցումը, Դ. Իսթոնի կարծիքով, ցանկացած գաղափարախոսության գործառնան պայմաններում ենթադրում է իշխանական դերերի կոնկրետ բաժանում քաղաքական իշխանության տարբեր ինստիտուտների միջև: Փաստորեն, հանրային և պետական ինստիտուտները, աջակցելով քաղաքական համակարգին, բարձրացնում են և՛ գաղափարական, և՛ կառուցվածքային, և՛ անհատական լեգիտիմության աստիճանը: Դ. Իսթոնի՝ լեգիտիմության երեք չափումների նման դիտարկումը, մեր կարծիքով, արդարացված է: Չանրագումարելով Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Նախկին Խորհրդային Միության քաղաքական համակարգերի կերպափոխման գործընթացը՝ ակնհայտ է դառնում դրանցում **մարդկանց ներքին հանգումների, պետության ինստիտուտի կարգավորիչ դերի, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման գերակայու-**

<sup>1</sup> Տե՛ս "Политология". Хрестоматия. М., 2000, էջ 319-320:

<sup>2</sup> Մ. Մարգարյան Լեգիտիմության հիմնախնդիրը քաղաքական զարգացումներում, «21-րդ դար» 2007, № 3(17), էջ 159:

**թյան հիմնախնդիրը:** Վերջիններիս գիտակցումը որպես գերակա արժեք՝ անվիճելի է դարձնում քաղաքական իշխանության լեգիտիմության արժեքային բազմաչափությունը՝ միաժամանակ ընդունելով պետության ինստիտուտի գործառնման գերակայությունը ազգային անվտանգության ապահովման համատեքստում:

Այդ առումով Դ. Իսթոնը գրել է. «Այն ժողովուրդը, որը չի ստեղծել այդպիսի գաղափար կամ չի փոխառել այն այլ ժողովուրդներից, հավանաբար չի կարող պետական իշխանությունը ընդունել որպես գերիշխանության միակ հնարավոր ձև»<sup>3</sup>:

Գերիշխանության լեգիտիմության հիմնահարցը քննարկելով պետական կառավարման ձևի շրջանակներում՝ հնարավորություն ենք ստանում ազգային անվտանգության ապահովման գործընթացում տարբերակված ուսումնասիրելու ձևական և ոչ ձևական ինստիտուտների գործառնությունը: Որպես գերիշխանության հիմք՝ քաղաքական իշխանության լեգիտիմությունը հիմնվում է հասարակության քաղաքական մշակույթի և կամքի, հատկապես սոցիալ-քաղաքական կյանքի պատմական այն առանձնահատկությունների վրա, որոնց շրջանակում, սահմանակարգելով տոհմային և ցեղային իշխանությունը, ձևավորվում, արդիականանում և գործառվում է պետության ինստիտուտը: Նրա ինստիտուտների շրջանակում ընդունված որոշումները և դրանց իրականացման համար ծավալված գործողությունները լեգիտիմ են միայն քաղաքացիների աջակցությունը վայելելու պայմաններում: Փաստորեն, եթե ավանդական լեգիտիմությունը ապահովվում է բարոյականության նորմերի, սովորույթների, պատմական նախադեպերի տեսքով, իսկ խարիզմատիկը՝ քաղաքական առաջնորդի անձով, ապա ռացիոնալ-իրավականը ենթադրում է սահմանադրական իրավունքի շրջանակներում ընդունված և իրականացվող որոշում: Այս հիմքի վրա էլ դրսևորվում են լեգիտիմության գաղափարական, կառուցվածքային և անհատական չափումները:

Պետական ինստիտուտների շրջանակներում քաղաքական իշխանություն «նուտք-ելք» ունեցող կոնկրետ անձանց (լիդերության և էլիտայի ինստիտուտ) կողմից իրականացվող քաղաքականությունում ներդրվում են նոր գաղափարներ: Այսպիսով, պետական կառավարման որոշակի ձևի շրջանակներում բաց կամ փակ ճանապարհով հավաքագրված լիդերները և էլիտար խմբերը պատասխանատու են քաղաքական իշխանության լեգիտիմության գաղափարական, կառուցվածքային և անհատական չափումների կենսունակության համար:

Չենց քաղաքական իշխանության կենսունակության ապահովման նկատառումներով պետական կառավարման մարմիններում հավաքագրված լիդերները և էլիտար խմբերը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին պարտավոր են մասնակից դարձնելու ընտրազանգվածին՝ նրանց **գիտակցված աջակցությունը** ստանալու ակնկալիքով: Այլապես ժողովուրդն օտարվում է քաղաքական իշխանությունից: Իսկ ժողովրդի օտարվածությունը հակադարձ համեմատական է նրա գիտակցված աջակցությանը. ինչքան ընդունված որոշումները հավասարարժեք չեն քաղաքա-

<sup>3</sup> "Политология", էջ 319-320:

կան իրականությանը, այնքան օտարունը ավելի խորը և անշրջելի թափանցուն է հասարակության տարբեր շերտեր՝ վտանգելով ազգային անվտանգության ապահովման մեխանիզմները: Այս իրավիճակը հնարավորություն է ստեղծում կերպարավորող հասարակություններում գերիշխանության իրականացման հավակնություններ և պատրանքներ ունենալ բոլոր նրանց համար, ովքեր, պատասխանատվություն չկրելով ժողովրդավարության որակի համար, իրենց կորպորատիվ շահերից ելնելով, մարգինալացնում կամ մահպուլացնում են զանգվածների գիտակցությունը:

Այս պարագայում քաղաքական իշխանության լեգիտիմությունը իր բազմաչափության մեջ վտանգվում է, քանի որ ժողովրդական զանգվածների կողմից մերժվում են քաղաքական կյանքի կազմակերպման և կառավարման ձևը, նրա հիմնական ինստիտուտները, օրենքները, ընթացակարգը և այլն: Ժողովրդի օտարվածությունը, համաձայն է. Ֆրոմի, խորացնում է քաղաքական զարգացման ճգնաժամերը՝ հանգեցնելով նրա փախուստին սոցիալական իրականությունից, ազատությունից: Նման օտարվածությունը, չնպաստելով լեգիտիմության ապահովմանը, նվազեցնում է «Ես»-ի գիտակցությունում ապակառուցողական էներգիան. «Օտարված լինելով իր սեփական ուժերից՝ մարդը դրանք վերագրում է իր կուռքերին, որոնք ընկալվում են որպես սիրո, լույսի, երանության մարմնավորում»<sup>4</sup>, - գրում է է. Ֆրոմը:

Ըստ այդմ՝ մեծանում են ազգային անվտանգության դեմ ուղղված արտաքին և ներքին սպառնալիքները, որոնք էլ հանգեցնում են ոչ միայն կոնկրետ անձանց կամ նրանց կողմից տարվող քաղաքականության, այլև պետական ինստիտուտների ճգնաժամի:

Քաղաքական գիտության մեջ որպես լեգիտիմության արժեքային բազմաչափության անկման հետևանքով առաջացած առաջին համակարգային ճգնաժամի բնորոշ օրինակ սովորաբար համարվում է 1688 թ. Անգլիայում տեղի ունեցած բուրժուական, այսպես կոչված պանծալի, հեղափոխությունը, որն ավարտվեց միապետի ու պառլամենտի միջև իշխանության վերաբաշխմամբ: Վերլուծելով հեղափոխության արդյունքները՝ անգլիական դասական ազատականության ներկայացուցիչներ Թ. Հոբսը և Ջ. Լոկը մշակեցին պետության և քաղաքացիական հասարակության ազատական զարգացման նոր միտումներ՝ առաջարկելով գաղափարների արդիականացման օգնությամբ կանխել լեգիտիմության ճգնաժամը և նպաստել հասարակական դաշինքի բնականոն գործունեությանը: Անգլիական հեղափոխության հաղթանակից հետո Թ. Հոբսը արդեն Փարիզում գրեց «Քաղաքացու մասին ուսմունքի փիլիսոփայական տարրերը» (1642) և «Լևիաթան» (1651) երկերը, որոնցում հիմնավորեց **հանրային տարածությունում սոցիալական միավորների քաղաքական շարժման մեխանիկական բնույթի վտանգը՝ փաստելով ինստիտուցիոնալացված ինքնորոշման անհրաժեշտությունը որպես մարդկանց (քաղաքացիների) կողմից ստացված կոլեկտիվ անվտանգություն ապահովող ռեսուրսների ամբողջություն**<sup>5</sup>: Մեխանիկական շարժման պարագայում ոչ կառա-

<sup>4</sup> Է. Ֆրոմ, Սիրելու արվեստը, անգլ. թարգ. Մ. Մարգարյան, Զ. Գրիգորյան, Եր., 1996, էջ 105:

<sup>5</sup> Стейн Гоббс Т. Сочинения в 2 т. Т. 2. М., 1991, էջ 129-143:

վարողները և ո՛չ էլ կառավարվողները չեն կարողանում հավաստի ընդհանրացնել փորձի արդյունքները, որի հետևանքով գաղափարները չեն արդիականանում հասարակական անվտանգության պաշտպանման նկատառումներով: Հետևանքը լինում է այն, որ խաթարվում են հասարակական դաշինքի ստեղծման հնարավորությունները, որովհետև պետական իշխանություն իրականացնող կառավարողների գործունեության անսահմանափակ բնույթը չի հանդուրժում գաղափարների փոփոխություն՝ հոգուտ հանրային անվտանգության և հանրային համակեցության:

Ձարգացնելով հասարակական դաշինքի մասին Թ. Հոբսի ուսմունքը, Ջ. Լոկը պետական անվտանգության ապահովման նկատառումներով շեշտադրում է **փորձի օգնությամբ ձեռք բերված գաղափարների վերամշակման անհրաժեշտությունը՝ հանուն արդարության և հանուն յուրաքանչյուրի հակվածությանը հասարակական դաշինքի**<sup>6</sup>: Ինչպես տեսնում ենք, Դ. Իսթոնի առաջարկած լեգիտիմության գաղափարական ճգնաժամի հետևանքով պետական կառավարումը հայտնվում է քաոսի մեջ. կառավարման համակարգում տեղ գտած թերությունները անձնավորվում են, սակայն որոշակի քաղաքական փորձից հետո, ադապտացիայի նկատառումներով կարևորվում է գաղափարների վերամշակման (արդիականացման) անհրաժեշտությունը, ինչպես դա տեղի ունեցավ 17-րդ դ. Անգլիայում:

Գաղափարական լեգիտիմության ճգնաժամը ուղեկցվում է և՛ կառուցվածքային, և՛ անհատական ճգնաժամերով: Նմանօրինակ քաղաքական զարգացումների լավագույն օրինակ է 18-րդ դարի Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը: 1789 թ. հուլիսի 14-ին գրավվեց միապետական իշխանության խորհրդանիշ Բաստիլի բանտը և գլխատվեցին միապետ Լյուդովիկոս 16-րդը և թագուհի Մարիա Անտուանետը, իշխանությունից հեռացվեց արիստոկրատիան, իսկ պետական կառավարման հանրապետական ձևի հաստատման հետ զուգահեռ փոխվեց նույնիսկ օրացույցը՝ անսանուններով հանդերձ: Ֆրանսիայի սոցիալական և քաղաքական համակարգում տեղի ունեցած արմատական կերպափոխությունների գործընթացում տապալվեց հին կարգը և հավասարության, ազատության, եղբայրության դրոշի ներքո հաստատվեց նոր կարգ՝ գաղափարական, կառուցվածքային և անհատական լեգիտիմության նոր չափումներով: Հաստատված նոր կարգի լեգիտիմությունը վերանայվեց 1799-ի նոյեմբերի 9-ի Թերմիդորյան հեղաշրջման ժամանակ:

Համընդհանուր ժխտողականության նման մթնոլորտ ստեղծվեց նաև 1917 թ. Ռուսաստանում Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակից հետո, որն ուղեկցվեց կարմիր տեռորով, էթնիկական զտումներով, մտավորականության արքայություն և համանման բազում այլ գործողություններով: Եթե քննարկվող օրինակներում քաղաքական իշխանության լեգիտիմության ճգնաժամը առկա է գաղափարական մակարդակում, ապա անհատական մակարդակում լեգիտիմության ճգնաժամի փայլուն օրինակ են Հռոմեական և Բյուզանդական կայսրությունների փլուզումները: Վերջիններիս հպատակները, այստահարված կայսերականությամբ և նրա տված օգ-

<sup>6</sup> Տե՛ս **Хеффе О.** Политика, право, справедливость. Основоположения критической философии права и государства. М., 1994, էջ 37, 43, 282-283:

տապաշտական հնարավորություններով, այնքան էին անտարբերացել իրենց պետականության նկատմամբ, որ զավթիչներին ցույց չտվեցին լուրջ դիմադրություն: Գաղափարական և կառուցվածքային լեզվափոխության ճգնաժամը օտարել էր սոցիալ-քաղաքական ժամանակի մեջ ապրող հռոմեական և բյուզանդական հպատակների անհատական «ես»-ը: Նրանք իրենց եսապաշտական և օգտապաշտական դիրքորոշմամբ դարձել էին «դատարկ կեղև»՝ չգիտակցելով համընդհանուր անվտանգության պահանջմունքի պահպանման անհրաժեշտությունը: Մինչդեռ Ա. Մասլոուի շահադրդման տեսությունից զիտենք, որ պահանջմունքների բավարարման աստիճանակարգային (բրգածև) կառուցվածքի տարբեր մակարդակները լրացնում են մեկը մյուսին՝ գտնվելով հարաբերական անկախության մեջ:

Հրապարկվելով օգտապաշտությամբ և չկարևորելով անվտանգության ապահովման գերակա ինստիտուտի՝ պետության կենսունակությունը՝ այդ կայսրությունների ժողովուրդների հոգեկերտվածքից դուրս էր մղվել հանուն համընդհանուր շահերի պաշտպանման նպատակով հերոսանալու և քաղաքական ժամանակի մեջ իրենց հերոսությունը լեզվափոխեցնելու ոգին: Անհատական մակարդակում լեզվափոխության պակասը ստեղծեց ապակառուցողական մի վիճակ, որի մասին շատ դիպուկ է արտահայտվել կայսրության մայրամուտի դարաշրջանի Ջոնի կայսրերից մեկը. «Ես ամեն ինչ էի, բայց այդ ամենը ոչինչ է»<sup>7</sup>: Նմանատիպ իրավիճակ ստեղծվեց Եվրոպայում Կառլոս Մեծի մահից հետո, երբ նրա հսկայածավալ կայսրության տարածքում տնօրինում էին նրա տրոհված բանակի ավազակային խմբերը՝ թալանելով եվրոպական ժողովուրդներին: Բերված պատմական օրինակները հիմք են տալիս եզրակացնելու, որ քաղաքական իշխանության լեզվափոխությունը բազմաչափ կառուցվածք ունի և որպես այդպիսին ենթադրում է պետության քաղաքականության սատարում, ինչպես նաև արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում պետության աջակցություն ժողովրդի կողմից: Աջակցությունը իրական է, եթե քաղաքական ժամանակի և տարածության մեջ հասարակության քաղաքական համակարգի ինստիտուտները իսկապես ժողովրդավարացվում են՝ շահագրգռելով քաղաքացիներին: Համաձայն Ա. Մասլոուի, եթե առաջին մակարդակում կարևորվում է կենսաբանական, ապա երկրորդ մակարդակում գերակայում են անվտանգության և ապահովության պահանջմունքները (ֆիզիկական անվտանգություն, զգացողական և տնտեսական ապահովվածություն, վաղվա օրվա նկատմամբ վստահություն և այլն): Հաջորդ երեք՝ սոցիալական պատկանելության, հարգանքի, ինքնաարտահայտման մակարդակները փաստորեն հենվում են առաջին երկուսի վրա: Ասվածից հետևում է, որ գաղափարական, կառուցվածքային և անհատական լեզվափոխության չափումները փոխլրացնում են միմյանց<sup>8</sup>:

Քաղաքական գիտության մեջ Դ. Իսթոնի մոտեցումը մինչ այսօր համարվում է նորարարություն, քանզի էապես ընդլայնեց լեզվափոխության վերերյան դասակարգման արժեքայնության տարածությունը: Իսկապես, ցանկացած պետությունում, անկախ նրա կառավարման ձևից, գործառ-

<sup>7</sup> Доган М. Легитимность режимов и кризис доверия // "Социс", 1994, № 6, с. 35-36.

<sup>8</sup> Տես Մենենջմենթ, ընդհանուր դեկ. և խմբ. Յու. Մ. Սուվարյան, Եր., 2002, էջ 165:

վում են որոշակի գաղափարախոսություններ, պետական իշխանական որոշակի կառուցվածք, որոնք հենվում են տվյալ գաղափարախոսության վրա, և կան որոշակի անձինք, որոնք պետական կառավարում են իրականացնում ընդունված կառուցվածքի շրջանակներում՝ նպատակամետորեն շահադրդելով ժողովրդի վարքը: Փաստորեն, քաղաքական լեգիտիմության մասին Վեբեր-իստոնյան տեսությունը էապես կարևորում է **քաղաքական իշխանության լեգիտիմության տարածական տիրույթների բազմաշերտությունը, որի կառուցվածքային կարևոր բաղադրիչ է ազգային պետական անվտանգության քաղաքականությունը:**

Նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է տալիս լեգիտիմության գաղափարախոսական և կառուցվածքային փոխհարաբերությունները դիտարկելիս, համաձայն Դ. Իսթոնի, կատարելու «...դերերի կոնկրետ բաժանում իշխանության տարբեր ինստիտուտների միջև, որոնց գործունեության հիմքում գերակա են տեղեկատվության հաղորդման և փոխանցման մեխանիզմները՝ որպես համակարգի աջակցության անհրաժեշտ պայման»<sup>9</sup>: Այլ կերպ ասած՝ հասարակության քաղաքական համակարգում գործառույթ արժեքները իրականացվում են կոնկրետ քաղաքական ինստիտուտների միջոցով:

Ասածից հետևում է, որ իշխանության իրականացման մշակույթի արժեքայնությամբ պայմանավորված և՛ հպատակը, և՛ քաղաքացին պետք է ընդունեն պետական իշխանության գերակայությունը՝ մասնակցելով նրա անվտանգության ապահովման գործընթացին: Պետության ինստիտուտի ժողովրդավարացման գործընթացի մասնակցությունը հնարավորություն է տալիս ժողովրդին հետամուտ լինելու անվտանգության քաղաքականության մշակման ռազմավարությանը: Փաստորեն, անվտանգության ապահովման նկատառումներով հասարակության մեջ լեգիտիմացվում է առաջին հերթին պետական իշխանությունը, երկրորդ՝ պետական կառավարման կոնկրետ ձևը և այն մարմնավորող ինստիտուտները, երրորդ՝ կոնկրետ դերակատարները, որոնք պատասխանատու են այդ ինստիտուտների գործառման համար, ներկայացնում են ծրագրեր, մշակում նախագծեր և հետամուտ լինում դրանց իրականացմանը:

Այդ իմաստով լեգիտիմությունը քաղաքացիներն ընդունում են որպես քաղաքական իշխանության իրականացման ռեֆլեքսային ձև, որը օրինականացնում է կառավարողների իշխելու իրավունքը: Նկատի ունենալով հենց այս հանգամանքը՝ ամերիկացի հետազոտող Ն. Լունանը կատարում է լեգիտիմության հաստատման ընթացքի քառաստիճան բաժանում՝ **մինչ-տեսական, տեսության հաստատման աստիճանը սկզբնական ձևի մեջ, «ակնհայտ» տեսության մակարդակ և, վերջապես, սիմվոլիկ ունիվերսումի ներառում**<sup>10</sup>:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դ. Իսթոնը, հարստացնելով լեգիտիմության վեբերյան հայեցակարգը, փաստարկեց քաղաքական իշխանության ռեֆլեքսիայի և լեգիտիմության նպատակառացիոնալ համակարգման գործընթացները, որտեղ պետական ինստիտուտներ

<sup>9</sup> "Политология", с. 330.

<sup>10</sup> Ст'ю Луман Н. Общество как социальная система. М., 2004, էջ 101-102:

րը, իրավունքը, սովորույթները, հավատքը և վստահությունը հանդես են գալիս որպես քաղաքական գործունեության հարաբերականորեն անկախ կառուցվածքային մասեր:

**ОВСЕП МОВСИСЯН – *Ценностная многомерность легитимации политической власти.*** – В статье рассматривается вопрос, как обеспечить национальную безопасность, которая тесно связана с легитимностью государственной власти. В этом контексте анализируется концепция основоположника теории легитимности М. Вебера в сравнении с идеологическими, структурными и индивидуальными критериями легитимности, выдвинутыми Д. Истоном.

Эволюция легитимности обуславливается в статье разницей между социально-психологической и нормативной системами ценностей, сложившимися в результате английской и французской революций. Соображения защиты национальной безопасности вынуждают общество легитимировать, во-первых, государственную власть, во-вторых, те или иные формы государственного правления и его институты, в-третьих, конкретных исполнителей, ответственных за деятельность этих институтов.

**HOVSEP MOVSISYAN – *The Value Dimensionality of the Legitimacy of Political Authorities.*** – The article discusses the process of guaranteeing national security, which, in the author's opinion, is a result of diverse measuring of legitimate activity value of power relations within social and political institutions. In this subtext the author has analyzed the conception of M. Weber, the founder of the theory of legitimacy, comparing it with D. Easton's measuring of ideological, structural and individual legitimacy.

Analyzing the evolution of legitimacy in the political epoch, the author of the article has made a historical review, underlining the differences of social-psychological and normative value system of English and French bourgeois revolutions in the context of national security.

In order to safeguard national security, it is proposed in the article to legitimate: firstly, the state power in the society, secondly, the concrete means of state government and its institutions, thirdly, the concrete performers who are responsible for the activity of these institutions.